Անձի կորուստ ալ կայ։ — Իզմիրի Օսմ. Պանքայի առժամեայ մթերանոցը, երկյարկանի ընդարձակ շէնք մը, այրած է իր ամբողջ պարունակութեամբ։ Կորուստը կը հաշուուի 80-100,000 ոսկի։ Շէնքը կը պատկանէր Արեւել. Գորգի ընկերութեան և պարունակութեան հետ ապահովագրուած էր իբր 60,000 ոսկիի։

ԱԻԵՏ. ԼՈՒՐԵՐ

Տր. Պարնըմ, որ այսուհետեւ աւետարանական գործով պիտի զբաղի գլխաւորապէս, կիրակի Լանկայի եկեղեցիին քարոզեց ի Պայպըլ Հաուս։ Այդ եղաւ իր Հայերէն առաջին քարոզը յետ Ամերիկայէ վերադարձին։

Անցեալ շաբթու Տր. Պօէն Ֆիլիպէ գնաց և երեք օրէն վերադարձաւ։ Տր. Մաքալըմ եւս Եգիպտոս գնաց երկու շաբթուան համար։

Կէտիկիւշայի եկեղեցիին շինութիւնը վերսկսաւ։ Ցոյս կայ որ ձմեռէն առաջ պիտի աւարտի տաճարին տախտակամածը առանց սրմերուն և գմբէթին։

Պանտրմայի ժողովուրդը ձեռնարկած է իր աղօթատունը նորոգել, և այս գործը ձմեռէն առաջ ի գլուխ հանելու համար բարեսէրներու օգնութեան կ'սպասէ անձկանօք։

Մէրսինի Հովիւ Վեր. Հ. Կէօքդալայճեան տեղւոյն յոբելինական մեծ հանդէսին առիթով Հայերէն ատենախօսած է Աւետ. մատրան մէջ և ուխտած է այսուհետեւ միշտ Հայերէն քարոզել։ Ցարդ իր սովորութիւնն էր Թրքերէն խօսիլ և քարոզել։

Մէզրէի Սբ. Գրոց Գերման դպրոցն սկսած է 4 ուսանողով։ Եփրատ Գոլէճի ուսանողութեան համագումարն հասած է 600ի, մինչ անցեալ տարի 532էր։ Ուսանողուհիները թուով քիչ մը աւելի են քան ուսանողները։

Մշոյ Ուսումն. Խորհրդի անդամ և Հաւատարիկի հովիւ Պատ. Միհրան Գաբրիէլեան Մուշէ Պիթլիս գացած է Խարախանեան Սրբազանի հետ ընդ առաջ նոր Պատրիարքին, նմանապէս Պիթլիսի հովիւ Վեր. Խաչիկ Վարդանեան և Նէփեան վարժարանի ուսանողները, ինչպէս և Մշոյ հովիւ Վեր. Գ. Ստեփանեան և Գերման որբանոցի ուսանողները։

Լոնտոնի Միսիոնարական Ընկերութեան այս տարւոյ բացն է 70,256 տոլար։

Պորտի քարտուղար Տր. Պարթըն ամսոյս 1ին Եւրոպա պիտի ուղեւորէր՝ Լահէի մէջ ժողովի մը ներկայ ըլլալու համար։ Իր դիտաւորութիւնն է յետոյ Փրակ անցնիլ և տեսնել Պորտի միսիոնարական գործն յԱւստրիա և ապա Փարիզի ճամբով վերադառնալ Լատինական Մնունդէն առաջ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Յոբելինական հանդէսներու նկարագրութիւններ կը հասնին հետզհետէ գաւառային մեծ ու փոքր ամէն քաղաքներէ։ Կիլիկիոյ Կաթողիկոսը Տէօրթ Եոլի մէջ ծանած է յոբելեանը և հիւրասիրուած է տեղւոյն Բէլէկեան որբանոցին մէջ։ Վենետիկի Մխիթարեան Հայրերուն հանդէսին ներկայ եղած են կառավարական ներկայացուցիչներ, Ֆրանսական հիւպատոսը և այլ երեւելի համակիրներ։ Երուսաղէմի Միաբանութիւնն ալ ծանած է յոբելեանը և թափօր կազմած է եկեղեցիէն դէպ ի ժառանգաւորաց Վարժարանը։ Ցետոյ Բեթլեհէմի մէջ դպրոց մը բացած է տեղացի ծնողաց զուրկ և անպաշտպան տղայոց համար։ Մէրսինի մէջ յոբելինական թափօրը նուագածութեամբ եկեղեցիէն գացած է Աւետ. մատուռը և հոն եղբայրակցական և աւուր պատշաճի ուղերձներ խօսուած են։ Երկու օրուան մէջ հանգանակութիւնը 310 ոսկի արտադրած է և դեռ կը շարունակուի։ Տեղւոյն օտար մամուլը գնահատական տողեր նուիրեց Պոլսոյ հանդիսութիւններուն։ Արտասահմանէ ալ գնահատումներ պակաս չեն։ Ֆիլիպէի Պալման թերթը, մասնաւոր դրուատիքն ընելով Հայերու ազգասիրութեան և համերաշխութեան, Թուրքերու հրաւէր կը կարգայ անոնց նմանիլ և մանաւանդ քաղաքական ու տնտեսական գործակցութեամբ զանոնք սիրաշահիլ երկրին ապագային համար։ Մայրաքաղաքիս մէջ սկսած հանգանակութեան հաշիւները դեռ ամբողջովին քննուած չեն. ցարդ ծանօթ արդիւնքն է 35,330 դահ.։— Պաշտօնական հրաւիրակները չորեքշաբթի մայրաքաղաքէս Տրապիզոն ուղեւորեցան ընդ առաջ Պատրիարք Հօր, որ երկուշաբթի մեկնած է Կարինէ։ Սասունի արտօնատէր Միհրան էֆ. յանձն առած է հոգալ Ազգ. Վարչութեան տրամադրութեան տակ դնելի Շիրէթի ընտիր չոգենաւու մը երթեւեկի ծախքերը։ Վեհ. Կաթողիկոսը կը հեռագրէ թէ արքունական տիտղոս տուած է Ն. Ամենապատուութեան և թէ կոնդակը թղթատարին յանձնուած է։ Նորաչէն Պատ-

բիարքարանն ալ կահաւորուած է և դիւանները այս չաբթու հոն կը փոխադրուին։ — Ատապազարի դէպքին պատճառով ձերբակալուած 13 անձեր բերուեցան հոս և պատերազմական ատեանի յանձնուեցան։ Ցեռոյ ուսուցիչ և վաճառական 10է աւելի անձեր հրաւիրուեցան վկայութիւն տալու համար, որոնց մէջ կը գտնուին Գ. Սիւքէրեան, Տ. Պաղտիկեան, Սրվաճեան, Ճրկայեան և Ալիքսանեան էֆ.ները։ Այս վերջինները արձակուեցան, բայց ամբաստանեալներէն Ա. Թումաեան և զինուոր Արամ 15 տարուան բանտարկութեան, մնացեալներն ալ այլ և այլ պատիժներու դատապարտուած կը կարծուին։ Պատրիարքարանի կողմէ միշտ դիմումներ կ'ըլլան Ներքին գործերու նախարարին և ճէմալ պէյի մօտ։ Քաղաքին անդորրութիւնը բարեբախտաբար վերահաստատուած է, և խուզարկութեան պահուն վտանգաւոր նիւթեր կամ արգելուած զէնքեր չեն գտնուած։— Տեղապահ Հայրը չաբթի տեսակցութիւն մը ունեցաւ Էվգաֆի նախարարին հետ և հաւաստիք ստացաւ թէ ազգապատկան կալուածներու արձանագրութեան սրբագրման և փոխանցման մասին հոգ պիտի տարուի որ համաձայնութիւն գոյանայ Տէֆթէրհանէի և Պատրիարքարանի միջև։— Արամ Հալաճեան էֆէնտի Միացեալի պատուոյ անդամ ընտրուեցաւ իբրև սկզբնաւորիչ նոյն ընկերութեան անձեռնմխելի դրամագլխին։ — Գումգափուի Մայր Վարժարանին վրայ յարկ մը աւելցնելու առաջարկն ընդունուեցաւ Քաղաք. ժողովէն։ —Վան-Նորատուղի հեռագրաթելով հաղորդուած առաջինը Միր Մհէի սպանութիւնն եղած է։— Պաղտատի երկաթուղիին ընկերութիւնը Ատանայի առաջնորդին 8,774 դահ. յանձնած է ի հաշիւ գեանուղիի աղէտին զոհ գացող 21 Հայերէն 16ին օրականներուն։ Կուսակալը յայտարարած է թէ աղէտին տեղեկագրին ամբողջանալուն կ'սպասէ ժառանգորդներուն դատը պաշտպանելու համար ընկերութեան դէմ։— Ատապազարի էլմալը գիւղէն 70 տարեկան դերձակ մը Թուրք գիւղի մը մէջ, ուր կ'աշխատէր, յոշոտուած գտնուած է իր անկողնին մէջ։— Պայազիտի Արծափ գիւղը խստիւ պաշարուած է՝ Թուրք ոստիկանի մը անոր մօտերը անծանօթներու կողմէ սպաննուած ըլլալուն առիթով։—Իզմիրի առաջնորդ Տ. Մատթէոս Վրդ. Ինճէեան, որ քանի մը օրէ ի վեր մայրաքաղաքս կը գտնուի և Էջմիածին պիտի երթայ եպիսկոպոսանալու համար, Փարիզի մէջ տեսակցած է Օսմ. դեսպան Բիֆաթ փաշայի, Պողոս Նուպար փաշայի և Նորատունկեան էֆ.ի հետ։— Ն. Ֆ. Փրեսք կ'իմանայ թէ Եւրոպական երկիրներու, Թուրքիոյ, Պարսկաստանի, Եգիպտոսի և Ամերիկայի Հայոց 250 պատուիրակներ միաձայնութեամբ խնդրած են որ Վեհ. Կաթողիկոսը իր ամբողջ հօտին անսահման անձնուիրութեան հաւաստիքը մատուցանէ Վեհ. Ջարին։ — Փեթերսպուրկէ կը հեռագրուի թէ Մ. Սասանով համամիտ գտած է Գերման և Ռուս կառավարութիւնները։ Երկուքն ալ կը փափաքին խաղաղութիւն Եւրոպայի և Պալքաններուն մէջ և հողային գոյավիճակի պահպանում Ասիական Թուրքիոյ մէջ՝ տեղային պէտքերու համապատասխան բարենորոգումներու պայմանով։ Թայմս կ'ըսէ թէ տէրութիւնները համաձայնած են Արևելեան նահանգներու բարենորոգման ծրագրին վրայ և յուսալի չէ որ Թուրքերը իրենց դարաւոր սխալը կրկնեն՝ խոստմնադրուժ ըլլալով և զէթ համեստ չափով մը Հայերու կեանքը, պատիւը և ինչքը չապահովելով։ Բումանական թերթ մը կ'ուրանայ թէ Բ. Դրան ծանուցագիր տրուած է Ասիական Թուրքիոյ բարենորոգումներուն գործադրման համար։ Իսկ Տէյլի Թէլեկրաֆ կը նկարագրէ թէ Թուրքիոյ մէջ ի՛նչ խոր տպաւորութիւն գործեց արգելքը որու Բ. Դուռը բախեցաւ, երբ Անգղիա ոչ միայն չղրկեց խնդրուած քընինիները, այլ նոյն իսկ արդէն Օսմ. ծառայութեան մէջ գտնուած Անգղիացիներու չարտօնեց այդպիսի պաշտօն ստանձնել։ Ուրիշ յօդուածով մը ջերմապէս կը յանձնարարէ այս ընթացքը փոխել և օգտակարութեան հաղուագիւտ պատեհութիւն մը ձեռքէ չփախցնել։ — Վանայ Առաջնորդ Սարաճեան Սրբազան, որու մահը ծանուցուած է արդէն, իր հոգին աւանդած է Ամերիկեան հիւանդանոցի Սրուանձտեանց բաժնին մէջ։ Մարմինը թաղուած է Նորաշէն եկեղեցւոյ բակին մէջ։ Թոչակի պահանջները (80 ոսկի) աղքին թողած է, ձին, զիրքերը և թանկագին աւետարան մը Վարագայ վանքին, իսկ Եպիսկոպոսական զգեստները որոնք 2-3 հարիւր տարուան հնութիւն

ունին՝ Էջմիածնի։— Տիկին Վասիլուհի Մարկոսեան մեծ հանդէսով թաղուեցաւ անցեալ շաբթու Ենիքէօյի եկեղեցիին շրջափակին մէջ։ Իսկ կիրակի անձամբ շքեղութեամբ կատարուեցաւ Սիմոն Զաւարեանի յուղարկաւորութիւնը։ Բերայի Սբ. Երրորդութիւն եկեղեցին ամբողջովին լեցուած էր յուղարկաւորներով, նմանապէս շրջակայ փողոցները։ Մեռելական արարողութիւններուն նախագահեց Տեղապահ Հայրը բազմաթիւ եկեղեցականներէ շրջապատուած։ Յայտնի երգիչ Տ. Արմ. Շահմուրատեան «Տիրամայրն կայր հանդէպ խաչին» երգով խորապէս յուզեց ունկնդիրները, Կոմիտաս Վրդ. ալ իր «Ի վերին Երուսաղէմ»ով, իսկ երկուքը մէկտեղ «Հայր մեր»ով վերնագաւառները փոխադրեցին կարծես բոլոր ներկաները։ Յետոյ յաջորդեցին դամբանականները։ Խօսեցաւ նախ Գնէլ Եպսկ., ապա Խաժակ ի դիմաց Դաշնակցութեան, Մ. Նալպանտեան յանուն Ուսումնական Խորհրդին, Հ. Պօյաճեան յանուն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան, Յ. Շահրիկեան յանուն ընկերներու, Լեւոն Լարենց յանուն Վերակազմ. Հնչակ. Կուսակցութեան և ի վերջոյ Ա. Ահարոնեան։ Ապա փառաւոր թափօր մը կազմուեցաւ սա կարգով. Ոստիկաններ և ոստիկան զինուորներ, զինուորական նուագախումբ, Հ. Յ. Դաշնակցութեան խաչոր ծաղկեպսակ մը զոր երեք բանուորներ կը կրէին, եկեղեցական դասը նախագահութեամբ Հմայեակ և Գնէլ Եպսկ.ներուն, դագաղը կերոնակիր և ծաղկակալ ընկերներով, համալսարանական Հայ ուսանողներու կրկնակ շղթայ (թափօրին աջ և ձախ կողմը), պատուիրակներ և ժողովուրդ։ Թափօրը նախ ուղղուեցաւ դէպ Ազատամարտի խմբագրատունը, յետոյ եկաւ մեծ պողոտան և յառաջացաւ դէպ ի Փանկալթիի գերեզմանատունը, ուր եւս շատ դամբանականներ խօսուեցան ընկերներէ եւ գպրոցականներէ։ Թափօրի անցքին պահուն հանրակառքերը և ամէն այլ կառքեր դադրեցան և փոխ ի փոխ կը լսուէին եկեղեցական երգեցողութիւնն ու նուագախումբին մեռելական քայլերգը։ Վերջին դամբանականէն ետքը մարմինը փոխադրուեցաւ Սբ. Լուսաւորիչ եկեղեցին և մինչեւ ուրբաթ հոն մնաց փոխադրուելու համար ի Թիֆլիզ։— Ցաւով կ'իմանանք թէ Մշակի խմբագիր Գ. Ա. Քալանթար իր մահկանացուն կնքած է 58 տարեկան։

ԱՐՏԱՔԻՆ

Պուլկարիոյ Թագաւորը Հոկ. 31ին Վիէննա ժամանեց անպաշտօն կերպով և ուղղակի իր դղեակը գնաց։ Պուլկար զօրացրումը 10 օրէն պիտի աւարտի և միայն 2 դասակարգ պիտի մնայ դրօշի տակ։ Պուլկար նաւահանգիստներ ժամանող Յոյն նաւեր քառապատիկ տուրքի ենթարկուեցան, վասն զի Յոյներ կրկնապատիկ տուրք կ'առնեն Պուլկար նաւերէն։ Յոյն և Պուլկար կառավարութիւնները զիրար փոխադարձաբար կ'ամբաստանեն անլուր խժդժութիւններով և իրարու դէմ վաւերագրեր կը պատրաստեն։ Պուլկար Ազգ. Միութիւնը կիրակի որոշեց կաթոլիկութիւն ընդունիլ և կառավարութիւնը, էկզարքը և կղերն հրաւիրել որ ազգին յանձնարարեն այս դաւանափոխութիւնը։ Մ. Տանէվ իր կուսակցութեան մէկ համաժողովին մէջ ճառախօսելով վերջին աղէտներուն բոլոր պատասխանատուութիւնը նետեց սպայակոյտին վրայ, որ հրամաններու անսաստելով Յոյներու և Սերպերու վրայ յարձակեցաւ։

Կը հերքուի թէ Ռուսիա Սոֆիայի մէջ դիմում ըրած է Սերպիոյ հետ դիւանագիտական յարաբերութիւնները վերսկսելու համար։ Պուլկար մամուլը անկարելի կը համարի այդ վերսկսումը, ցորքան ժամանակ Պուլկար գպրոցներ, եկեղեցիներ ու եկեղեցականներ յարձակում կրեն Սերպերէն։— Ռուս Ծովային Նախարարը Տումային ներկայեց 77,752,549 րուբլի վարկ մը՝ աւարտելու համար մինչեւ 1919 շինելի մարտանաւերն ու նաւային գործարանները։ Կիրակի Նիքոլայէվի առջեւ ծով իջեցուցուեցան Իմփէրաթրիս Մարիա տրէտնօթը և Թուրիօ ընդծովեան։— Մ. Սազանով կ'ըսէ թէ Լոնտոնի դեսպանաժողովը դեռ իր գործը չէ աւարտած, և թէ չկարծեր որ անլոյծ մնացած խնդիրներու պատճառով որեւէ բարդութիւն կամ անհամաձայնութիւն ծագի տէրութիւններուն միջեւ։— Ռումանիոյ ներքին գործերու նախարարը Աթէնք ուղեւորեցաւ։— Մօրէնիի (Ռումանիա) քարիւղի հանքերը կ'այրին։ Ասոնց մէջ է Քօլըմպիոյ մեծ աղբիւրը, որ օրը 50 վակօն քարիւղ կ'արտադրէ։ Ամբողջ հովիտը բոցերու մէջ է։

ՏՊԱՐԱՆ ՔԻՒՑԻՒՃԵԱՆ
Մահմուտ Փաշա, Քիւրքճի խան, Նօ. 32—34